Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԻՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26.10.2026թ. *ք.Երևան*

*Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան՝ Ա. Կուրտիկյանս ուսումնասիրելով 27 նոյեմբերի 2025 թ. հարուցված թիվ **14283490** կատարողական վարույթի նյութերը*

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 26 նոյեմբերի 2025 թ. տրված թիվ ԵԴ2/9467/02/25 կատարողական թերթի համաձայն պետք է Հայկազ Մկրտչյանից հօգուտ «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲ ընկերության բռնագանձել 10,348,805 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

Բռնագանձումը տարածել գրավադրված և պարտապան Հայկազ Ռազմիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Շենգավիթ Վ. Շենգավիթ 2-րդ փողոց 20/1 շենք, 43 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի վրա, ինչպես նաև Հայկազ Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքերի և դրամական միջոցների վրա:

Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել պարտապան՝ Հայկազ Ռազմիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Շենգավիթ Վ. Շենգավիթ 2-րդ փողոց 20/1 շենք, 43 բն. Հասցեում գտնվող անշարժ գույքի վրա, որը ըստ ՀՀ ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ ՍՊ Ընկերության եզրակացության համաձայն գնահատվել է 26.700.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1,35.2,35.3 և 35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան՝ Հայկազ Ռազմիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ անշարժ գույքը՝

h/h	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	Աճուրդի մեկնարկային գինը	գույքի քանակը
	ք. Երևան, Շենգավիթ Վ. Շենգավիթ 2-րդ փողոց 20/1 շենք, 43 բն.	**26.700.000 ՀՀ դրամ**	**20.025.000 ՀՀ դրամ**	**1**

*ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ Հարկադիր կատարման ծառայության աճուրդի իրականացման էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ **www.harkadir.ajurd.am** ինտերնետային կայքի միջոցով:*

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 26.11.2026 թվականին:

Որոշման օրինակը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱՆ՝ Ա. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն *Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում փվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխանտրանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:*

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում:

Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: